ԵՐԵՎԱՆԻ Հ. 104 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ղեկավար՝ Հ. Հ. Ավետիսյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2022-2023թթ. ուսումնական տարում թ. 104 հիմնական դպրոցում շարունակում է գործել Գրական խմբակը:

Խմբակում ընդգրկվում են 4-9 դասարանի աշակերտներ, և այն ենթակա է համալրման մինչև ուսումնական տարվա ավարտը: Խմբակին հատկացված է 11 դասաժամ, որն անցկացվում է շաբաթական չորս օրում:

Գրական խմբակի գործունեությունն իրականացվում է ծնող-ուսումնական հաստատություն համագործակցության և փոխպայմանավորվածության միջոցով, և դասընթացների իրականացման, հաճախումների ապահովման համար պատասխանատու են երկկողմանի:

Ծրագիրը կազմելիս հաշվի է առնվում աշակերտների նախասիրություններն ու տարիքային առանձնահատկությունները: Խմբակի գործունեության հիմնական խնդիրներն են՝

1. Զարգացնել աշակերտների նախասիրություններն ու հետաքրքրությունները,լեզվական մտածողությունը,
2. Նպաստել գեղարվեստական խոսքի կատարելագործմանը և ինքնուրույն մտածողությանը, որն առանձնապես կարևոր է ստեղծագործող աշակերտների համար,
3. Խորացնել աշակերտների գիտելիքները տարբեր թեմաների վերաբերյալ,
4. Ծանոթացնել հայ և համաշխարհային գրականության մեծերին,
5. Ծանոթացնել Հայոց դիցարանին, հայոց լեզվի գաղտնիքներին,
6. Նպաստել աշակերտների լեզվամտածողությանը և աշխարհաճանաչողությանը,
7. Արթնացնել երեխաների հայրենասիրական ոգին,
8. Արժևորել ազգային ինքնությունը, ընտանիքի և պետության դերը:

ՎԵՐՋՆԱԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Իմանան՝

1. գրական ժանրերը, դրանց առանձնահատկությունները:
2. իրենց դարաշրջանը և դրա մարտահրավերները:

Կարողանան՝

3. կողմնորոշվել տարբեր ժամանակաշրջանների մշակութային կյանքում՝ ըստ առանձնահատկությունների, համակողմանի վերլուծեն դրանք, ցուցաբերեն նախաձեռնողականություն, ձևավորեն ինքնուրույն որոշումներ կայացնելու և հետևանքների համար պատասխանատու լինելու ունակություն:

Տիրապետեն՝

- չափածո խոսք ստեղծելու հնարներին, արձակ խոսք շարադրելու կանոններին, իրենց հույզերը, կարծիքը ազատորեն ներկայացնելու կարողությանը:
- խմբակի սաների նախաձեռնողականության, ինքնուրույնության խրախուսումը:

Ուժեղ և թույլ կողմերը՝

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի նյութատեխնիկական բազան	Աշակերտների հաճախակի բացակայություն՝ հիվանդության կամ արտադպրոցական այլ վճարովի խմբակներ հաճախելու պատճառով
Հմուտ խմբակի ղեկավար	Տղաների՝ խմբակներում ընդգրկվելու ոչ բավարար մոտիվացիա
Վարչական անձնակազմի հետևողականություն	
Համագործակցություն ծնողների հետ,աշակերտական խորհրդի հետ	
Պատասխանատու անձանց կողմից բարձր վերահսկողություն	
Աշխատանքի ոչ ֆորմալ բնույթը	

№ 1	2.	3.	4.
	4-6-րդ դասարաններ		
1.	**Գրականությունը՝ որպես խոսքի արվեստ**		
	Նպատակը		
	• Տալ գաղափար գրականության մասին: • Հայ և համաշխարհային գրականության միջոցով հասկանալ և արժևորել սեփական և այլ ազգերի մշակույթը, ճանաչել և արժևորել բարին, գեղեցիկը, վեհը: • Ծանոթանալ գրական սեռեր, ժանրեր, երկի կառուցվածք, կոնֆլիկտ, կերպար եզրույթներին:		
	Վերջնաարդյունքը		
	Կարդալ հայ և համաշխարհային մեծերի ստեղծագործությունները, ձեռք բերել հետաքրքրություն գրքի հանդեպ և ընթերցասիրություն ողջ կյանքի ընթացքում:		
	Բովանդակություն		
	Գրական սեռեր և ժանրեր		
	Գրական երկի կառուցվածքը		
	Նախապես ծանոթ ստեղծագործությունները դասակարգել ըստ ժանրերի		
	Հետազոտել արդեն ծանոթ որևէ ստեղծագործության կառուցվածքը		
2.	**Հեքիաթ**		
	Նպատակը		
	• Զևավորել հեքիաթի տեքստը ընթերցելու, հասկանալու, հիմնական գաղափարը մատնանշելու կարողություն: • Զևավորել հեքիաթին բնորոշ առանձնահատկությունները և խորհրդանիշներն ըմբռնելու կարողություն: • Զարգացնել աշակերտների ստեղծարարությունը: • Հորինել հեքիաթ՝ պահպանելով ժանրի առանձնահատկությունները:		

	Վերջնաարդյունքը • Կարողանալ կարդալ և կազմել հեքիաթում պատմվող դեպքերի պլանը: • Կարողանալ տարբերելը իրականը երևակայականից: • Կարողանալ բնութագրել հեքիաթի հերոսներին ըստ նրանց արարքների: • Կարողանալ մասնակցել հեքիաթի բեմադրության աշխատանքներին:		
	Բովանդակություն		
	Հայկական ժողովրդական հեքիաթներ		
	Հեղինակային հեքիաթներ		
	Տարբեր ժողովուրդների հեքիաթներից նմուշներ		
	Գրել հեքիաթ՝ պահպանելով ժանրի առանձնահատկությունները		
3.	**Առակներ**		
	Նպատակը • Ձևավորել առակի ժանրին բնորոշ առանձնահատկությունները, այլաբանությունը, առակի խրատական դաստիարակիչ դերն ըմբռնելու, բարոյական դասեր քաղելու կարողություններ: • Ձևավորել որոշակի վերաբերմունք առակի այլաբանական իմաստի շուրջ: • Դիտարկել առակում հանդիպող խորհրդանիշները:		
	Վերջնաարդյունքը • Կարդալ առակի տեքստը, մատնանշել առակի տեքստի կառուցվածքը, սկիզբը, ընթացքը, ավարտը, խրատաբանությունը: • Առանձնացնել առակի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը: • Կարողանալ հասկանալ պատճառահետևանքային կապն առակում: • Տեղեկություններ հավաքել առակում նշվող ծառերի, բույսերի, կենդանիների մասին:		

	• Կարողանալ հորինել առակ՝ պահպանելով ժանրի առանձնահատկությունները:		
	Բովանդակություն		
	Հայկական առակագրություն		
	Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակները		
	Դասական գրողների չափածո և արձակ առակները		
	Աստվածաշնչյան առակներ		
	Տարբեր ժողովուրդների առակների նմուշներ		
	Գրել առակ՝ պահպանելով ժանրային առանձնահատկությունը		
4.	**Զրույցներ, առասպելներ**		
	Նպատակը		
	• Իմանալ ինչ է բանահյուսությունը: • Գաղափար հեթանոս Աստվածների մասին: • Առաջարկվող ստեղծագործությունների միջոցով ծանոթանալ մեր ինքնության ակունքներին: • Արժևորել ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակությունը: • Ստեղծագործությունները դիտարկել որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման:		
	Վերջնարդյունքը • Կընթերցեն զրույցներ, առասպելներ: • Կարողանան մեկնաբանել տեքստերի բովանդակությունը, գնահատել փաստերը, ուսումնասիրել պատմական ժամանակաշրջանը: • Իմանալ հեթանոս Աստվածներին:		
	Բովանդակություն		
	«Ինչու՞ ենք մենք հայ կոչվում» Յուրի Սարգսյան		
	Հայկ Նահապետի հետքերով		
	Հայկ Նահապետ (Զայն Արարատի) ունկնդրում		
	Բաբելոնյան աշտարակի առեղծվածը		
	Հայոց հին հավատքը		
	Հայ Աստվածների թողած գաղտնիքները (Համլետ Մարտիրոսյան)		
	Լևոն Շանթ. «Հին Աստվածներ»		

	Լսել մեր մեծերին «Հին Աստվածներ». Կարդում է Վ. Փափազյանը		
	Մեր մեծերը. Սոս Սարգսյան «Նարեկացի»		
	«Սասունցի Դավիթ» էպոսը՝ որպես Արարչագիր տիեզերավեպ		
	«Սասնա ծռերը»՝ հավերժական գիտելիքի և նախնիների սրբազան պատմություն		
	«Սասունցի Դավիթ» էպոսը և հայ պետականությունը		
	Հայկ Խաչատրյան «Քերթողահայրը» (հատվածներ)		
	Հայկ Խաչատրյան «Քերթողահայրը» (հատվածներ)		
	Բագրատ Ուլուբաբյան «Զրուցարան» (հատվածներ)		
	Բագրատ Ուլուբաբյան «Զրուցարան» (հատվածներ)		
5.	**Ամենագլխավորն աչքով չես տեսնի** **Անտուան դը Սենտ-Էքզյուպերի**		
	Նպատակը		
	• Ծանոթանալ հեղինակի կյանքին: • Կարդալ ստեղծագործությունը, մատնանշել գլխավոր ասելիքը: • Խթանել ինքնուրույն մտածողություն: • Աշակերտների մեջ արթնացնել միշտ բարի գործեր անելու, մարդկանց օգնելու կարողություն:		
	Վերջնաարդյունքը		
	• Կարողանալ մեկնաբանել ստեղծագործությունը իրենց ընկալմամբ: • Կարողանալ ստեղծել իրենց հրաշք մոլորակը, ուր թևածում են բարությունն ու ընկերասիրությունը, անկեղծությունն ու ճշմարտությունը: • Կարողանալ մասնակցել խմբային աշխատանքներին:		
	Բովանդակություն		
	Կարդալ «Փոքրիկ Իշխանը» ստեղծագործությունը		
	Դուրս գրել 10 հանճարեղ արտահայտություն այդ գրքից		
	Պատրաստել ցուցապաստառ գրողի դիմանկարով, նրա կյանքի և ստեղծագործության մասին հետաքրքիր փաստերով		
	Կարդալ պատմվածքներ, որի հերոսները կլինեն կենդանիներ		

	Գրել նամակ պատմվածքի հերոսին կամ հերոսի անունից		
6.	**Հայոց տիեզերական այբուբենը**		
	Նպատակը		
	Բացահայտել այբուբենի գաղտնիքները:		
	Վերջնաարդյունքը		
	• Իմանալ և ներկայացնել հայ գրերի ստեղծման պատմությունը: • Իմանալ հայոց այբուբենի գաղտնիքները:		
	Բովանդակությունը		
	Հայոց այբուբենը՝ կանխամտածված նախագիծ		
	Ժայռապատկերներից մինչև այբուբեն (Արտակ Մովսիսյան)		
	Հայոց գրերի հետքերով (Զայն Արարատի)		
	Հայոց լեզուն՝ գրերի նախամայր		
	Հայոց լեզվի գաղտնիքները		
	Զվարթնոց տաճարը և հայոց այբուբենը		
	Բանաստեղծություններ՝ նվիրված այբուբենին		
7-9-րդ դասարան			
7.	**Բառերի կախարդական աշխարհը**		
	Նպատակը		
	• Ձևավորել ընդհանուր պատկերացում լեզուների, ցեղակցության, հայերենի զարգացման փուլերի մասին: • Զարգացնել պատկերավոր խոսք կազմելու հմտություններ:		
	Վերջնաարդյունքը		
	• Պատկերացում կազմել լեզուների ցեղակցության մասին: • Իմանալ և համեմատել հայոց լեզվի 3 փուլերը: • Հասկանալ հայերենի բառապաշարի շերտերը ըստ ծագման: • Հետազոտություն կատարել, տեղեկատվություն որոնել, գտնել և վերլուծել բառերի ծագումը: • Կարողանալ ուշադրությունը կենտրոնացնել նպատակների և այդ նպատակների հասնելուն, կարողանալ ակտիվ գործունեություն ծավալել, վերլուծել ստացված տեղեկությունները:		

	Բովանդակություն		
	Բառերի կենսագրությունը		
	Բառերի ճակատագիրը		
	Բառը՝ որպես անցյալի բանալի		
	Դպրություն և արվեստ/Ներսես Մկրտչյան/		
	Լեզուների ցեղակցությունը		
	Կազմակերպել մրցույթ «Դեպի բառերի ակունքները» խորագրով		
8.	**Պատմվածք**		
	Նպատակը		
	• Ձևավորել գիտելիքներ գրողի և նրա ստեղծագործության մասին: • Ծանոթանալ արձակի ստեղծման կանոններին: • Ձևավորել գիտելիքներ տեքստի, բառապաշարի, ոճի, կոնֆլիկտների և կերպարի մասին: • Զարգացնել աշակերտների մոտ իրադրության սեփական վերլուծություն, ստեղծագործությունները վերարտադրելու, կարծիք հայտնելու, դիրքորոշում դրսևորելու կարողություն: • Ծանոթանալ օտարազգիր հայ գրողների ստեղծագործությանը: • Ձևավորել որոշակի վերաբերմունք օտարազգի գրողների հանդեպ: • Սովորել հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք՝ որպես համամարդկային մնայուն արժեքներ:		
	Վերջնաարդյունքը		
	• Ընկալել ստեղծագործության բովանդակությունը: • Մատնանշել պատմվածքի դեպքերի հաջորդականությունը: • Առանձնացնել հերոսներին բնութագրող բառերը: • Առաջարկել մատնանշված խնդիրների լուծման նոր տարբերակ: • Կարողանալ հիմնավորել և մեկնաբանել սեփական տեսակետը:		

	Բովանդակություն		
	Կարդալ մեր մեծերին Հրանտ Մաթևոսյան (արձակագիր, կինոսցենարիստ)		
	Մաթևոսյանի ստեղծագործությունները՝ որպես հավիտենականության արժեք		
	Պատմվածքներ. «Կանաչ դաշտը», «Ծառերը», «Հայը»		
	Զուգահեռներ անցկացնել Մաթևոսյանի և Շուկշինի արձակի միջև		
	Կերպարակերտման ճշմարիտ արվեստը		
	Մաթևոսյանական և շուկշինյան հերոսները		
	Կինոդիտում - «Մենք ենք, մեր սարերը»		
	Կինոդիտում - «Աշնան արև»		
	Վիլյամ Սարոյան. «Նարինջները»		
	Վ. Սարոյան. «Ընկերների մեղքով»		
	Վ. Սարոյան. «Հանճարը»		
	Վ. Սարոյան. «Դաշնամուր»		
	Վ. Սարոյան. «Հայրի՛կ, դու խենթ ես»		
	Վ.Սարոյան. «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ»		
	Վ. Սարոյան ընտրովի ստեղծագործություն		
	20-րդ դարի արտասահմանյան արձակ		
	Օ. Հենրի. «Մոգերի ընծաները»		
	Շերվուդ Անդերսոն. «Մայրը»		
	Շերվուդ Անդերսոն. «Ուսուցչուհին»		
	Սոմերսեթ Մոեմ. «Պարոն ամենագետը»		
	«Գետնախորշը»		
	«Մայր Անգլիայից հեռու»		
	«Գանձը»		
	Ջեկ Լոնդոն Պատմվածքներ		
	Ջեկ Լոնդոն Պատմվածքներ		
	Ընտրովի պատմվածքների ընթերցում		
9.	**Բանաստեղծություններ**		
	Նպատակը		
	• Զևավորել և զարգացնել բանաստեղծության տեքստը՝ արտահայտիչ, հասկանալով կարդալու կարողությունը:		

	• Ստեղծագործության մեջ հեղինակի առաջադրած մտքերը, խոհերը, զգացմունքները հասկանալու կարողություն: • Ձևավորել հնչերանգային արտասանության կարողություն: • Հասու դարձնել հայտնի ասմունքողների խոսքը, հաճախակի լսել նրանց, հաճախել մշակույթի օջախներ: • Ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի մասին:		
	Վերջնաարդյունքը • Կարողանա հասկանալով կարդալ, մատնանշել բանաստեղծության կառուցվածքը, հանգավորումը, ռիթմը, բացատրել պատկերավորման միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: • Խորությամբ ճանաչել հայ և արտասահմանյան գրողներին: • Զարգացնել գեղագիտական ճաշակ և քննադատական մտածելակերպ:		
	Բովանդակություն		
	Դասական և ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունը		
	Վահան Տերյան. Բանաստեղծություններ		
	Հովհաննես Շիրազ. Բանաստեղծություններ		
	Վահագն Դավթյան. Բանաստեղծություններ		
	Համո Սահյան. Բանաստեղծություններ		
	Հովհաննես Թումանյան. Բանաստեղծություններ		
	Ավետիք Իսահակյան. Բանաստեղծություններ		
	Ընտրովի բանաստեղծություններ		
	Աքրոստիկոսի մրցույթ		
	Երգ դարձած բանաստեղծություններ		
10.	**Հայապատում**		
	Նպատակը		
	• Ձևավորել ազգային և հոգևոր արժեքներ • Ծանոթանալ արևմտահայ գրողների կյանքին ու ստեղծագործությանը:		
	Վերջնաարդյունքը		
	Նպաստել արժանապատիվ դաստիարակությանը:		

	Բովանդակություն		
	«Մեր մեծերը» շարքից. Մուշեղ Իշխան		
	Մուշեղ Իշխանի պոեզիան		
	Մուշեղ Իշխան և Արթուր Մեսչյան		
	Մեսչյանի երգերը (ունկնդրում)		
	Հետադարձ հայացք (Ռուբեն Սևակ)		
	Սևակը և Յանին		
	Սևակը բանաստեղծ		
	Պերճ Զեյթունցյան. «Վերջին արևագալը» (հատվածներ)		
	Զոհրապի նովելները		
	Զոհրապի բանաստեղծությունները		
	Զոհրապի պատգամը. «Անվերապահ նվիրվեք հայրենիքին»		
	«Հայրենանվեր քերթողության պսակը» Դանիել Վարուժան		
	Մի սիրո պատմություն (Արաքսյա-Վարուժան)		
	Նեմեսիս		
	Միակն իր տեսակի մեջ (հեթանոս երգեր)		
	Վարուժանի կյանքի վերջին ամիսները		
	Հրանտ Թամրազյան. «Եղիշե Չարենց»		
	Երիտասարդ Չարենցը		
	Մեծ կյանքի երգը. Տաղարան		
	Հայաստանի հավերժության երգը. «Ես իմ անուշ Հայաստանի»		
11.	**Հաղթանակների ամիս**		
	Նպատակը		
	Աշակերտների մեջ արթնացնել և զարգացնել հայրենասիրական ոգի:		
	Վերջնաարդյունքը		
	Դաստիարակել հայրենապաշտ սերունդ:		
	Բովանդակություն		
	Մայիսյան հաղթանակներին նվիրված բանաստեղծություններ		
	Բանաստեղծություններ՝ նվիրված հայոց բանակին		
	Արցախյան պատերազմը և գրականությունը		
	Արցախյան հերոսներին նվիրված բանաստեղծություններ		
	«Արցախյան ազատամարտը» (30 բանաստեղծություն)		
	Արցախամարտի հավերժ ցոլացող աստղերը (հերոսապատում)		
	«Մեր ճակատի գիրը» բանաստեղծությունը		
	Հայրենական պատերազմը և գրականությունը		
	Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվան նվիրված		

	բանաստեղծություն		
	Իլյա Արցախցի. բանաստեղծություններ		
	Վահագն Դավթյան. բանաստեղծություններ		
	Գևորգ Էմին. բանաստեղծություններ		
	Սարդարապատի ճակատամարտին նվիրված բանաստեղծություններ		
12.	**Գրական ցերեկույթներ**		
	Նպատակը		
	Մեծացնել հետաքրքրությունն արվեստի նկատմամբ:		
	Վերջնաարդյունք		
	• Ձևավորել իրենց մտքերն ու զգացմունքներն արտահայտելու կարողություն: • Գեղարվեստական ճաշակի զարգացում: • Թիմային աշխատանքի մասնակցելու կարողություն:		
	Բովանդակություն		
	Դեպի բառերի ակունքները		
	Հրաժեշտ աշնանը		
	Հայ բանահյուսություն (զրույցներ)		
	Վահան Տերյան «Երկիր Նաիրի»		
	Մրցույթ ստեղծագործող աշակերտների միջև		